**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**31.03.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/46-3 գնման պայմանագրի**

ք. Երևան «19» «06» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «ՋԻ ԷԼ ԹԻ» և «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունները (համատեղ) (այսուհետև՝ Կապալառու), որոնք գործում են համաձայն 03.03.2026 թվականի համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի, ի դեմս «ՋԻ ԷԼ ԹԻ» ՍՊ ընկերության տնօրեն Տ. Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու) և ի դեմս «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու) մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 31.03.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/46-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.7 կետը և **Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

***1.Համաձայնագրի առարկան***

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

**1.1** Պայմանագրով նախատեսված՝ **Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արցախի պողոտա 24 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքների** կատարման ժամկետը երկարաձգել 20 (քսան) օրացուցային օրով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է 3/երեք/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900022600424
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ՋԻ ԷԼ ԹԻ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Գետափնյա 2-րդ փ., 13-րդ նրբ., տ. 4ա
Բանկ՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2621964367901001
ՀՎՀՀ 08275477

Տ. Հակոբյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ազատության 24/15
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570068678480100
ՀՎՀՀ 00200833

Ա. Սարգսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ